Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

10.12.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 05.12.2014թ.-ի թիվ 131 կարգադրությունը, Վայոց ձորի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնում անցկացվեց 2014թ.-ի գործունեության համապատասխանության աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանի և Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեց բաժնի պետ՝ Մ.Արտաշեսյանը:

Նախնական տվյալներ.

Բաժնում ընդգրկված է 1 առաջատար մասնագետ: Բաժինը ղեկավարում է բաժնի պետը: Բաժինը ունի բաժնի կանոնադրություն՝ հաստատված մարզպետի կողմից: Բաժնի պետը և աշխատակիցը համարվում են քաղաքացիական ծառայողներ:

Նպատակը.

Համապատասխանության աուդիտի միջոցով մարզպետին և ներքին աուդիտի կոմիտեին հավաստիացում է տրվում բաժնի գործունեության օրենքներին, իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ:

Աուդիտի հիմնական ուղղությունը.

ա/ Բաժնի կանոնադրության, աշխատակիցների քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքների և պարտականությունների համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության, <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի ղեկավարի հրամանների և այլ իրավական ակտերի պահանջներին:

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ.Կարապետյանը, ներքին աուդիտորներ՝ Ն.Կարապետյանը և Հասմիկ Ավետիսյանը: Ունեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության փորձ:

Համադրել ենք ՀՀ Սահմանադրության, <<Քաղաքացիական ծառայության մասին>> ՀՀ օրենսդրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության, <<Պետական կառավարչական հիմնարկների մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումների և կարգադրությունների, Աշխատակազմի ղեկավարի հրամանների և այլ իրավական ակտերի պահանջներով վերապահված բաժնի պետի և աշխատակիցների լիազորությունները բաժնի կանոնադրությամբ և բաժնի աշխատակիցների պաշտոնի անձնագրերով սահմանված լիազորությունների հետ:

Եզրակացություն.

Բաժնի կանոնադրությամբ, բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով սահմանված քաղաքացիական ծառայողների իրավունքներն և պարտականությունները համապատասխանում են ոլորտը կարգավորող՝ ՀՀ նախագահի հրամանագրերի ,ՀՀ օրենքների , ՀՀ կառավարության որոշումների և ՀՀ վարչապետի որոշումների պահանջներին:

Ներքին աուդիտի բաժնի պետ՝ Վ. Կարապետյան

Աուդիտորներ՝ Ն. Կարապետյան

Հ. Ավետիսյան

Անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Մ. Արտաշեսյան